ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2015, 11 – Լ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՎԱԿՆՈՐԴ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 25.02.2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԺԱՄԸ 20:00-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) *որոշում է.*

1. Ոչ տեղին ու ոչ նպատակահարմար համարել կրկին անդրադարձը այն հարցերին, որոնք վերաբերում են 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին առաջին մրցույթի անցկացմանը:

2. Միաժամանակ առաջարկել հանձնաժողովի անդամներին ձեռնպահ մնալ մրցույթի մասնակիցների վերաբերյալ որևէ ձևով հրապարակային անդրադարձերից՝ ղեկավարվելով բոլոր մասնակիցների նկատմամբ բացառապես հարգալից վերաբերմունքի դրսևորման սկզբունքով:

Հանձնաժողովի նիստը վարող Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ